Մի պատմվածքի մասին. «30 սմ»

Ես Նաիրային չեմ ճանաչել, հպանցիկ նկատել եմ համալսարանում ու ակամա ընդվզել բնության գործած «մեղքերի» դեմ... Նրա փոխարեն ճանաչել եմ մորը՝ վայելչակազմ, գեղագանգուր, բարձրաշխարհիկ մի կնոջ, և եղբորը՝ զուսպ, բարեկիրթ, համակրելի, գեղանկարիչ արվեստագետի վարպետ ձեռքով մի երիտասարդի, որ անկարելին դարձնում էր կարելի, անհաճոն՝ հաճելի... որ ժպտում էր իր հիվանդներին ու նրանց պարգևում ազատ ժպտալու ցանկալի երազանքը...

Առաջին զգացումը, որ ապրում է ընթերցողը Նաիրա Փիրումյանի պատմվածքների ժողովածուն ընթերցելիս, պատկերավոր, պարզ ու հստակ լեզուն է՝ փիլիսոփայական խորքերով... Ինքնակենսագրական բովանդակություն ունի... «30 սմ» պատմվածքը։ Տողերի տակից հառնում է մի աղջնակ, որ իր ֆիզիկական թերությամբ հանդերձ, ունեցել է հզոր կամք՝ ֆիզիկական թերության պատճառած ֆիզիկական ու հոգեկան ցավին դիմակայելու, երբեք չի ընկճվել, ավելին՝ իր կամային հատկանիշների ու լավատեսության շնորհիվ իր տեղն է գտել բոլոր տարիքներում։ Դպրոցում, անգամ դասընկերներից խորունկ վիրավորված, չի հանձնվել տրամադրությանը, ընդհակառակը, իր խելքով, շնորհքով սիրվել է, անգամ հեղինակություն դարձել, համառորեն հաղթահարել հոգու ցավն ու դարձել առաջավոր աշակերտուհի, դասարանի ավագը, հանդես բերել կազմակերպչական փայլուն կարողություններ ... բայց ... ներքուստ ինքն իրեն համարել օտար, ոչ լիարժեք... Պատմվածքում հեղինակի կրած դաժան փորձություններն են նկարագրված հեռավոր Սիբիրում, նախավիրահատական ու հետվիրահատական ծանր ցավերը, հուսալքության ու հավատի իրարամերժ ապրումները... Այնքան կենդանի ու զգայացունց են հեղինակի ապրումները, բնության ստեղծածի ու մարդկային մտքի պայքարի նկարագիրը, որ ասես դրանք ընթերցողի աչքի առաջ են կատարվում, ու նրա ցավը, այն է՝ կյանքի իմաստը՝ մայրանալու բերկրանքը երբեք չվայելելու ցավը փոխանցվում է քեզ...

Սահուն է հեղինակի լեզուն, պատմելաձևը՝ անպաճույճ. հիվանդանոցային կյանքի դրվագները լի սիրով, բնական գույնով. պատմվածքն ասես նովելների մի փունջ է՝ մարդկային հոգու դրամատիկ հույզերով հագեցած. ահա Հորդանանից եկած գեղեցկուհի Սաբահի և պարսկահայ Ռազմիկի սիրո դրաման. կյանքը նրանց չէր

կարող միացնել, որովհետև տարբեր էին կրոնները, կամ Կոստյայի և սիրունիկ Դաշայի սերը, որը ընդհատվել էր տղայի ծնողների պահանջով: Սեղմ, բայց գունագեղ վրձնահարվածներով են կերտվել նաև մյուս հերոսների լիարյուն դիմանկարները... Իսկ ամենահետաքրքիրը աղջկա ցավոտ սիրո պատմությունն է, նրա և Թոդորի սիրո, որ երանելիության չափ ցանկալի էր, անհնարին ու անհավանական լինելու չափ իրական, իսկ նրանց համբույրները՝ հեղված արցունքներով... Ինչքա՜ն անկեղծ ու վարակիչ են հեղինակ-հերոսուհու հոգեբանական բացահայտումները. սիրված լինելու երկբայությունը, կասկածները Թոդորի սիրո անկեղծության մասին, հանդիպման սպասումի երջանկաբեր սպասումները, տագնապները նրա ուշացման ժամանակ... Բաժանումն անխուսափելի պիտի լիներ, ու մեր հեղինակը ևս տառապանքով ձեռք բերած իր 30 սմ-ով իր հայրենիքն է դառնում՝ հայտնագործած իր սիրված լինելու հնարավորությունը, ազատ լինելու, ատելու, սիրելու, այսինքն՝ ապրելու լիաբուռն զգացումը...

Ա. Սարհատյան